ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԻՔ

Հարությունյան Ն.Ա.

Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան, n.harutyunyan@ysu.am

Հասարակության տարածքային կազմակերպումը դիտարկվում է որպես հասարակական համակարգի տեղաբաշխումը կարգավորող գործընթացների ամբողջություն, որի արդյունքում ձևավորվում են տարածքային կառուցվածքային միավորներ՝ հասարակական երկրահամակարգեր: Հասարակական երկրահամակարգի էվոլյուցիան պահանջում է մշակել պետության համապարփակ կայուն զարգացման հայեցակարգ, որում անհրաժեշտաբար պետք է հաշվի առնել համակարգաստեղծ տարաբնույթ գործոնների սիներգետիկ ազդեցություններն ու պետության, որպես բարդ համակարգի, էմերջենտությունը: Պետության

քաղաքականությունն՝ ուղղված հասարակության տարածքային կազմակերպման կատարելագործմանն ու արդյունավետացմանը, կարող է հաջողված համարվել, եթե հիմքում դրվում է տարածքի պլանավորման լանդշաֆտային մոտեցումը:

Լանդշաֆտային պլանավորումը (ԼՊ)՝ լինելով մեթոդական գործիքների ամբողջություն, օգտագործվում է կոնկրետ բնական երկրահամակարգերում հասարակական գործունեության տարածական արդյունավետ կազմակերպման համար և միտված է ապահովելու բնատարածքային համալիրների գլխավոր գործառույթների պահպանությունն ու կայուն բնօգտագործումը: ԼՊ մեջ բնության բաղադրիչների գնահատման ու պահպանման խնդիրների հետազոտման իմաստը կայանում է դրանց՝ որպես ամբողջական համակարգ, ներքին կազմակերպվածության և փոխադարձ կապերի պահպանության նախադրյալների ստեղծումն ու կենսունակության ապահովումը:

ԼՊ գործընթացում ամբողջ տարածքը դիտարկվում է համարժեք կարևորությամբ տարածքային միավոր: Համալիր ծրագրերի միջոցով որոշվում է տարատեսակ բնահասարակական երկրահամակարգերի զարգացման արդյունավետ ուղղությունները: Պլանավորման ժամանակ այդպիսի մոտեցման հիմնական նպատակն է մշակել տարածքի կայուն և համաչափ զարգացման ամբողջական հայեցակարգ, որով տեղական բնակչությանը տրվում է նաև արժանավայել կյանքի իրավական երաշխիք: Դա հնարավոր է երկու փոխկապված խնդիրների միաժամանակ լուծման դեպքում.

- հողօգտագործման կանոնակարգից ելնելով՝ տարածքի գոտիավորում,
- բնապահպանական կանոնակարգից ելնելով՝ սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգի մշակում:

ԼՊ կատարվում է գործողությունների որոշակի հաջորդականությամբ (Haaren C.v., Galler C., Ott S. 2008).

1. Տարածքի բնահասարակական երկրահամակարգերի տարասեռ բաղադրիչների համալիր վերլուծություն և գնահատում:
2. Բնություն-հասարակություն-տնտեսություն ազդեցությունների զարգացումը սահմանափակող գործոնների գնահատում:
3. Բնահասարակական երկրահամակարգերի օբյեկտիվորեն գոյություն ունեցող տարածքային տարբերությունների և ռեսուրսային ներուժի բացահայտում:
4. Բնական միջավայրի զարգացման նպատակային գործառույթների սահմանում:
5. Տարածքի կայուն և համաչափ զարգացման նպատակի իրականացման համար՝ միջոցառումների ցանկի նախապատրաստում:
6. Դիտարկվող տարածքի նկատմամբ հասարակության պահանջների բավարարման համար՝ տարածքային կառուցվածքի կատարելագործման առաջարկների մշակում:

ԼՊ իրականացվում է տարբեր մասշտաբներով և տարածական մակարդակներով: Այն համաձայնեցվում է ընդհանուր տարածքային պլանավորմանը և, որպես ստորակարգային համակարգ, ընդգրկում է տարածքի զարգացման

լանդշաֆտային ծրագրի մշակումը, լանդշաֆտային շրջանակային պլանի կազմումը, ստեղծում խոշորամասշտաբ լանդշաֆտային պլան, ինչպես նաև մշակում լանդշաֆտային պլանավորման իրականացման ու դրանց կատարման վերահսկողության չափորոշիչային փաստաթղթեր: Պլանավորվող վիճակի և տարբեր մակարդակների կարգադրագրերի գնահատականները լրացնում են իրար, շրջանակային հանձնարարականը ստորին մակարդակի համար ծառայում է կողմնորոշիչ ցուցում և հակառակը, իրենք ձևավորվում են ներքևի առաջարկի ազդեցության տակ: Լանդշաֆտային պլանի կազմում ներառվում են քարտեզների շարք և ուղեկցող տեքստ:

Բնահասարակական երկրահամակարգերը կազմավորվում են տարածքային ընդհանուր պլանավորման արդյունքում: Բնահասարակական երկրահամակարգերի արժեքների գնահատումը նպաստում է անհետացման վտանգի տակ գտնվող և պահպանության կարիք ունեցող բնական ու մարդածին տարրերի վերաբերյալ հասարակության իրազեկվածության և մասնագետների տեղեկացվածության բարձրացմանը: Բնահասարակական երկրահամակարգերը ձևավորող տարածքային պլանավորման մեջ որոշումներ կայացնելու համար, անհրաժեշտ են կոնկրետ հիմքեր և գործողությունների հստակեցված դաշտ: Տարածքային ընդհանուր պլանավորման ծրագրում՝ ԼՊ առաջարկություններն անհրաժեշտ է դիտել որպես պահանջ, որոնք պետք է հստակ արտահայտվեն նախագծում և ամրակցվեն գլխավոր պլանին: Ընդհանուր պլանավորման այնպիսի ուղղությունների հետ, ինչպիսին օրինակ կառուցապատման համար տարածքների առանձնացումն է, միաժամանակ պետք է առաջադրվեն նաև էկոհամակարգի հուսալիությունն ապահովող միջոցներ, որոնք կարող է մշակել միայն լանդշաֆտային պլանավորումը: Տարածքների ընդհանուր պլանավորմանը զուգահեռ կատարվող լանդշաֆտային պլանավորումը հնարավորություն է տալիս էկոլոգիական տեսակետից գնահատել ծրագրում նախատեսվող գործողությունները և կարող է նախօրոք կանխել ծավալվող ոչ համարժեք գործընթացները:

ԼՊ օժանդակում է բնակավայրերի բարեկարգման և կառուցապատման գործընթացին: Ելնելով բնակավայրի բնական և գործառնական առանձնահատկություններից՝ ԼՊ գործիքի միջոցով մշակվում են կանաչ պլաններ, որոնք մանրամասն ձևով արտահայտվում են քաղաքաշինական ծրագրերում: Քանի որ քաղաքային բնակավայրերում տեխնիկական միջավայրի ակնհայտ գերակշռությունը բնականի նկատմամբ առաջ է բերում մի շարք էկոլոգիական և սոցիալ-հոգեբանական վտանգավոր երևույթներ, հետևաբար պահանջ է առաջանում քաղաքային միջավայրում բնական բաղադրիչի ավելացման և պահպանության: Դրա իրականացման համար օգտակար է կիրառել ԼՊ գործիքը, որը կարող է ապահովել նշված մտադրությունների էկոլոգիական հիմնավորվածությունը և համակարգվածությունը: Այդ միտումը բնորոշ է նաև գյուղական բնակավայրերի համար, որը դրսևորվում է ոչ միայն բնական և մարդածին արժեքավոր տարրերի

պաշտպանության և վերականգնման մեջ, այլ նաև ԼՊ հիմքի վրա տարածքների ընդհանուր էկոլոգիական առողջացման գործընթացներում:

Գյուղատնտեսության, անտառային և ջրային տնտեսությունների էկոլոգիական ուղղվածությամբ զարգացումը բխում է հասարակության շահերից: Ժամանակակից գյուղատնտեսությունը, անտառային և ջրային տնտեսություններն իրենց վրա կրում են սխալ բնօգտագործման և վտանգավոր աղտոտման հզոր ազդեցություն: Այդ ազդեցության հետևանքների վերացման և կանխարգելման համար պահանջվում են հստակ մշակված տարբեր ծրագրեր, որոնց իրականացմանը լավ հիմք է ծառայում ԼՊ իր կոնկրետ և էկոլոգիական առումով հիմնավորված առաջարկությունների միջոցով: ԼՊ կողմից առաջարկվող միջոցառումներն ունեն նախազգուշացնող, պաշտպանող և վերականգնող նշանակություն:

Համայնքային և միջհամայնքային մակարդակներում, տարածքային կայուն և համաչափ զարգացմանն ուղղված որոշումների ընդունման գործընթացին, էապես կարող է նպաստել ԼՊ: Համայնքներում ենթակառուցվածքների զարգացման և հողերի օգտագործման պլանները պահանջում են մեծ ներդրումներ և կարիք ունեն վստահելի էկոլոգիական հիմնավորման: Հատկապես համայնքային մակարդակում է ամենից հեշտ որոշում կայացնել, որոնք երաշխավորված են լանդշաֆտային պլաններով և ընդգրկում են որոշակի տարածքներ, ինչպես նաև շոշափում են մասնավոր և հասարակական շահեր: Դրա համար կարելի է համայնքային հողերում ստեղծել պահպանվող կենսավայրերի ցանց: Հաճախ համայնքներին հարկ է լինում գործ ունենալ արտաքին ազդակների և կառավարությունից կատարվող առաջարկությունների հետ, որոնք էականորեն շոշափում են իրենց շահերը: Նման դեպքերում շատ օգտակար են լինում լանդշաֆտային պլանները, ինչպես նաև լանդշաֆտային շրջանակային պլանները: Ելնելով դրանց կարգադրություններից՝ համայնքները կարող են հասնել գլխավոր նախագծերի փոփոխության, հողօգտագործման և կառուցապատման պլանների արգելման կամ լրամշակման:

ԼՊ մեջ մեծ կարևորություն է տրվում մասնավոր նախաձեռնությունների և տեղական բնապահպանական գործողությունների համակարգմանը: Էկոլոգիական խնդիրներ շոշափող մասնավոր նախաձեռնությունների և տեղական բնապահպանական միջոցառումների համակարգման գործողությունների իրականացմանը մասնակցում են բազմաթիվ մարդիկ: Երբեմն այս գործողություններն ունենում են պատահական և չհամակարգված բնույթ: Լանդշաֆտային պլանում միշտ առկա է նաև միջոցառումների ամբողջական հայեցակարգը, որի հետ կարող են և պարտավոր են համապատասխանեցնել իրենց գործողությունները բոլոր քաղաքացիները:

Լանդշաֆտային պլանների ստեղծման և կատարման պատասխանատվությունը տարբեր վարչական մակարդակներում միանման չէ: Եթե լանդշաֆտային ծրագիրն առաջարկվում է ՀՀ վարչատարածքային բաժանման մարզերի մակարդակին, ապա դրա կազմման համար պատասխանատու են լինելու համապատասխան ճյուղային

նախարարություններն իրենց տարածքային կառույցներով, որոնք միաժամանակ հանդիսանալու են կրողներ: Լանդշաֆտային շրջանակային պլանների կազմումը վարչական միավորի համապատասխան գերատեսչությունների, կամ տարածաշրջաններում ընդհանուր պլանավորման կրողների իրավասությունն է դառնալու: Լանդշաֆտային պլանի կազմման համար պատասխանատու են համարվելու համայնքները որոնք նաև կառուցապատման պլանների կրողներն են:

ԼՊ արդյունքում ձևավորված զարգացման նպատակները և միջոցառումները հասցեագրվում են բոլոր մարդկանց, կազմակերպություններին և իշխանություններին, որոնք զբաղվում են բնության վրա ազդեցություն ունեցող գործունեությամբ: Կազմակերպությունների շարքում, որոնց պարտականությունների մեջ են մտնում լանդշաֆտային պլանների կարգադրությունների կատարումը, կարելի է առանձնացնել հետևյալ հասցեատերերին (Wende W. 2000).

- տարածաշրջանային և կառուցապատման պլանների կրողներ,
- բնապահպանական գերատեսչություններ,
- ճյուղային պլանավորման գերատեսչություններ և կազմակերպություններ:

Այդ կազմակերպություններն ու գերատեսչությունները, նախօրոք մշակված օրենքներով և իրավական ակտերով, պարտավոր են հաշվի առնել և կատարել ԼՊ կարգադրությունները, որոնք վերաբերվում են բնության պահպանությանը: Դրանով հանդերձ տարածաշրջանային պլանավորման կրողներն իրար մեջ պետք է համաձայնեցնեն բնօգտագործման նախատեսված բոլոր պահանջներն ու կարիքները և դրանք մտցնեն տարբեր մակարդակների տարածքային զարգացման ընդհանուր հայեցակարգի մեջ:

ԼՊ գլխավոր հասցեատերերի մեջ են մտնում կառուցապատման պլանների կրողները: Համայնքային մակարդակի լանդշաֆտային պլանների կարգադրությունները մտնում են կառուցապատման պլանների մեջ և այս կերպ ձեռք են բերում պարտադրություն: Բնապահպանական գերատեսչությունները, անկախ ԼՊ մակարդակից, դառնում են դրա կրողները և հասցեատերերը: Ճյուղային պլանավորման մյուս հատուկ կազմակերպությունները նախօրոք մշակված օրենքներին և իրավական ակտերին համապատասխան պարտավոր են օժանդակելու բնության պահպանության նպատակների իրականացմանը: Ճյուղային պլանավորման որոշ բնաշահագործող տեսակների համար բնության պահպանությունը, բարելավումը և զարգացումը հանդես են գալու որպես սահմանափակումներ, իսկ պլանավորման մյուս տեսակների համար՝ անտառային և գյուղատնտեսական, այս պահանջները շատ դեպքերում համապատասխանելու են սեփական նպատակներին ու ներառվելու են համապատասխան պլանների մեջ:

ԼՊ կատարման և իրագործման պարտադրականությունն ու դրա կարգադրությունների կատարումը պետք է գործի օրենքի ուժով: Լանդշաֆտային շրջանակային պլանների մակարդակում մշակված կարգադրությունները, որոնք ընդգրկվում են տարածաշրջանային պլաններում, պարտադիր են մարզային բոլոր

գերատեսչությունների և կազմակերպությունների համար: Պարտադրականությունը տարածվում է նաև ամենացածր մակարդակի լանդշաֆտային և կանաչ պլանների վրա:

Այսպիսով, կատարված վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ հասարակության տարածքային կազմակերպման ժամանակակից փուլում՝ հասարակական և էկոլոգիական համակարգերի զարգացման մեջ հատուկ նշանակություն է ստանում լանդշաֆտային և սոցիալ-տնտեսական տարածքային ռազմավարական պլանավորման փոխկապվածության հայեցակարգը: Տվյալ հայեցակարգն ուղղված է հասնելու տարածքի տնտեսական և սոցիալական հետաքրքրությունների էկոլոգիական սահմանափակման հակասությունների կարգավորման նպատակին: Տարածքի զարգացման լանդշաֆտային և սոցիալ-տնտեսական պլանավորման ամբողջական նպատակների արդյունքները համապատասխանաբար հանդիսանում են հողօգտագործման ծրագրերի բարելավման, կառավարման համակարգի կատարելագործման և զարգացման, վարչատարածքային կառուցվածքի բարեփոխման, ինչպես նաև համայնքային կազմավորումների տարածքային կազմակերպման առավել արդյունավետ հայեցակարգի մշակման նախապայմաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Haaren C.v., Galler C., Ott S.: Landscape planning. The basis of sustainable landscape development. 2008.
2. Wende W. (2000): Sicherung der Qualitat von Umweltvertraglichkeitsstudien durch die Landschaftsrahmenplanung. In: Naturschutz und Landschaftsplanung-Moderne Technologien, Methoden und Verfahrensweisen. Hrsg.: Gruehn D.; Herberg A.; Roesrath, C. Mensch & Buch Verlag, Berlin. S. 289-298.

LANDSCAPE PLANNING AS EFFECTIVE TOOL OF TERRITORIAL ORGANIZATION OF SOCIETY

Harutyunyan N. A.

Yerevan State University, Yerevan, Armenia, n.harutyunyan@ysu.am

Territorial organization of the society is one of the pivotal issues of each country. That is why the search for solutions ensuring sustainable and proportionate development of science based on scientific knowledge and reliable data is considered to be one of the most important issues of governance policy. In this context, landscape planning is crucial.